

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ—ԽՄԲԱԿԵՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 14

I ԱՊՐԷԼ 1900

Մասիս շաբաթաբերքի տարեկան բաժանորդագրիցն է կես օսմ. ոսկի քե' Կ. Պոլսոյ եւ քե' գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 Գրանգ' : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն 1 Կ. Պոլսոյ :

Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը զտուի Բերայի բոլոր ծխաւանդակներուն ու Պահչե-Գաբուի ջրաւանդակներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրաւանդակներուն ֆոլ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐՍԵԻ

ՀԱՍՏԷ

درعليهده غلطهده «ماسيس» غزتهسى ادارهسى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Ղալաթիա, Նորաստուկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԻՍԹԸՐՆ ԳԱՌԻՆԹԻՍ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊՈՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ (Ի ՀԸԼԼ)

Նպաստւոր պայմաններով կ'ապահովագրուին ամեն տեսակ շէնք, կառասի, սպրանգ

ԳՐԱՄԱԳԼՈՒԽ 7,250,000 ՖՐԱՆԲ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, Թիւ 53, 54, 55, 56

Ընկերութեան զրամատուէն է ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

“ԱԼԼԷԱՆՁԱ”

ԱՊՈՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՃԵՆՈՎԱ)

ԳՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԱՐ 87,455,645

Ընկերութիւնը կը կնքէ կեանքի ապահովագրութիւններ խառն, եւ որոշ պայմանաժամերով, օժիտի, ցկեանս կամ ժամանակաւոր եկամուտներու, հետեւեալ առաւելութիւնները ընծայելով.

Մէկ տարուան ապահովագրութենէ ետքը, երբէք ապահովագիրները (քոյիս) չեն ջնջուիր, մենամարան ու անձնապահութիւնը կ'երաշխաւորուին, քնաւ ո եւ է արհեստի կամ ուղեւորութեան համար յաւելւածական ապահովագին (քոյիմ) չի պահանջուիր, ապահովագիրներու վճարումը դադարելու պարագային՝ ապահովագիրը կը գնուի ըստ նշանակեալ արժէքին, ապահովագրի ծախք չառնուիր, ընկերութեան շահերուն կը մասնակցի ապահովագրուողը:

Արկածեալներու դեմ ապահովագրութիւն մահուան կամ աշխատելու անկարողութեան պարագային ժամանակաւոր անկարողութեան համար օրական վճարում կ'ըլլայ:

Երաշխաւորութիւններ՝ հեծանիւի, ձիու, կառքի, թրամուէլի, երկաթուղիի, շոգենաւի, առագաստանաւի, միջատներու խայթուածքի եւ ապահովագրուողին արհեստին մէջ կամ անկէ դուրս պատահելիք ուրիշ ո եւ է արկածի դէմ:

Ընկերութիւնը կ'ապահովագրէ օրինաւոր անձնապաշտպանութիւնը, ինչպէս նաեւ մարդ մը կամ ինչք մը ազատելու առթիւ պատահած ո եւ է արկած:

Ընկերութեան պանքան է՝ ՔՐԷՏԻ ԼԻՈՆԷ

Ընդհանուր գործակաւսար Գ. ՖԵՐԱՏԵԱՆ

Կ. Պոլիս, Հաճորուլօ խան, Թիւ 53, 54, 55, 56

ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ բաց տեղ մը կայ հայ գրաշարի մը համար որ գիտնայ լաւ ֆրանսերէն չարել: Առաջնութիւն պիտի տրուի անոր որ քիչ չափ յուշարէն ալ գիտնայ: Անօգուտ է ներկայանալ առանց առաջին կարգի յանձնարարականի:

ՄԱՍԻՆ

49-րդ ՏԱՐԻ

— ❧ I ԱՊՐԻԼ 1900 ❧ —

ԹԻԻ 14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր թերեր. ուղիներուն քով [Բանաստեղծութիւն] ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆ. — Մեր արուեստագետները Տիկին Սիրանոյշ. ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ. — Անգլիական Գրականութիւն. Ի. Թէնի ուսումնասիրութիւնը Շէքսպիրի վրայ. Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ. — Պետրոս Դուբեանի անտիպ մէկ նամակը. — Իմ առաջին հրատարակութիւնս. ՎԱՀԱՆ Վ. ՊԱՐՏԻԶԱԿՑԻ. — Զիթենեաց լեռան վրայ [Մաղկադարդի քերթուած]. ՈՒՆՏԱԽՈՐ. — Դեպի Հնդկաստան [Ուղեւորական տպաւորութիւններ Բիէռ. Լողիի] Թարգմ. ԵԻՓԻՄԷ ՕՏԵԱՆ. — Գիտական ժամանց. Սուտն ու իրաւը. ԳԱՄԻՅԼ.

Տ Բ Ո Ւ Ր Թ Ե Լ Ե Ր

ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ԲՈՎ

ԱՌ ՍԻՊԻԼ

Լայն ուղիներու քովն, եզերքն ի վեր,
Խոտին մէջ ծաղիկ հեզիկ, աղւորիկ,
Ի՛նչ հոգիներ կան, անոյշ, անձնուէր,
Մեկ կողմ մընացած, հեզ, մինաւորիկ,
Լայն ուղիներու քովն, եզերքն ի վեր....

Խոտին մէջ ծաղիկ հեզիկ, աղւորիկ,
Որոնց վըրայ ձեռք մ'երբեք չը՛ դողար,
Տենեւորով տրոփուն սիրտեր կան գողտրիկ,
Հեշտաբոյր, սակայն անխնայ, անթաղար,
Խոտին մէջ ծաղիկ հեզիկ, աղւորիկ....


Ի՛նչ հոգիներ կան անոյշ, անձնուէր,
Որոնք հեծելով հիւծին մեկուսի.
Գուք ու գորովի ընչ սիրահրաւեր,
Լանջքին տակ՝ անշուք կընոջ ու կուսի,
Ի՛նչ հոգիներ կան անոյշ, անձնուէր....

Մեկ կողմ մընացած, հեզ, մինաւորիկ,
Երազուն աչեր թուի ու կապուտակ,
Որոնց ժրպիտին փքումն անդորրիկ
Խամրի, խաւարի խնւլ ցաւերու տակ,
Մեկ կողմ մընացած, հեզ, մինաւորիկ

...Լայն ուղիներու քովն, եզերքն ի վեր,
Մարդիկ անտարբեր կ'անցնին ու կ'երթան .
Իրենց ոտքին տակ ծաղկունք ճըմլւեր՝
Լըքուած, լըռելեայն կու լան ի մըքան,
Լայն ուղիներու քովն, եզերքն ի վեր....

ՄԵՐ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇ



Պագուէն Ռոսդով, Ռոսդովէն Նախիջեւան, Նախիջեւանէն Մոսկուա, — թատերական ամբողջ tournée մը կազմակերպած՝ երբ Տիկին Սիրանոյշ կ'երթայ բեմական կեանքը արծարծել այդ հեռաւոր միջավայրերու Հայերուն մէջ, կարելի չէ որ պահ մը կանգ չառնենք մեր վաղածանօթ ու համակրելի արուեստագիտուհիին յաջողութեան լուրերուն առջեւ։ Թիֆլիզէն Արեւելքի ու Պագուէն Մաւխի գրեցին արդէն, թէ մամուլը գնահատումի անկեղծ շնորհով կը խօսի իր վրայ։ Նախաճորերու երկրին մէջ անցուած ձմեռնային փայլուն շրջանէ մը ետքը, Տիկին Սիրանոյշ մարտի սկիզբը իր առաջին ներկայացումը տուեր է Նոր Նախիջեւան, հո՞՞ւրաք մութեան մը առջեւ որուն նեղ կուգար թատրոնը։ Թերեւս առաջին անգամը չէր որ այնտեղ կը տեսնէին Գալմեյիսպարի Տիկինին ներկայացումը, բայց առաջին անգամ կը ծափահարէին Տիկին Սիրանոյշը Մարկրիդ Կօթիէի գերին մէջ, եւ յետոյ՝ Մեդիալի, Ֆրու-Ֆրուի, Օթեղոյի, Տիկին Սան-Ժեանի մէջ, գերասանական լաւ խումբի մը ընկերակցութեամբ։ Անցած դարնաւ ալ, Տիկին Սիրանոյշ այցելեց Պաթում, Կարս, Ալեքսանդրօլ։

Այդ ներկայացումնց արձագանգները կը յիշեցնեն 1879 թուականը երբ Օր. Աստղիկ, Օր. Սիրանոյշ ու Ագամեան առաջին անգամ Թիֆլիզ հրաւիրուեցան թատրոնական մասնաժողովին կողմէ ու հմայեցին, զիւթեցին ո՛չ միայն հայ, այլ եւ ռուս ու վրացի հասարակութիւնները իրենց ազդու խաղացումներովը, ներգաշնակ արտասանութեամբը ու համակիր երեւոյթովը. գաղափար մը տալու համար անոնց առաջ բերած խանդավառութիւնը, կը բաւէ յիշել պարագայ մը որ գրուեցաւ ան ատեն։ 1879ին ու յաջորդ տարիներուն՝ Կովկասի եւ մասնաւորապէս Թիֆ-

լիզի մէջ ծնած հայ աղջիկներուն անունները մեծ մասով Աստղիկ ու Սիրանոյշ դրուած են։ Հայերէն լեզուն, մինչեւ այն ատեն անտաշ ու թանձրահնչին, վտարուած, գրեթէ արհաւիրահաւած Թիֆլիզի բոլոր բարեկեցիկ բնուանոյց առողջանութեանը շնորհիւ՝ բնուանիքներու սիրելի լեզուն դարձաւ, ու մինչեւ իսկ չափահաս օրիորդներ սկսան հայերէն սորվիլ։

Քսանդմէկ տարի ետքը, երբ Աստղիկ ու Ադամեան շատոնց գերեզման իջած են արդէն, Տիկին Սիրանոյշ կը յարատեւէ իր բեմական գործունէութեանը մէջ զոր 1891ին վերսկսաւ Կովկաս, առաջին տարիները Թիֆլիզ, ու այս վերջին երեք տարիները Պագու։ Ու աւելի ետ երթալով, պիտի գտնենք որ երսուն տարուան շրջան մը բոլորելու մօտ է արդէն, այն թուականէն ի վեր ուր, խառտիչագեղ պզտիկ աղջիկ մը տակաւին, Օրթագեղի թատրոնին բեմը կ'ելլէր առաջին անգամ՝ երգելով «Թուշնիկ»ին երգը զոր Պաւեան Յակոբ պէյ՝ ներշնչման մէկ վայրկեանին՝ յատկապէս գրած էր ծաղկատու սուպոնեթին համար։

Ինչպէս թուշնիկ մը որ վարժած

Լոկ իր հովտին մէջ երգելու,

Թէ փառաւոր զահլիճ մ'երթայ՝

Խառովի ընդհատի երգին իւր թել։

Նոյն սրտազոյն ունիմ եւ ես

Մինչ ձեր առջին պարզել կուգամ

Դողդոջ ձայնով, մեղմիկ երգով

Իմ հառաչանքս ի լուռեման։

Կուսի կենաց Թելերն հիւսն

Գաղանի արցունք, ժպիտ, գգուանք։

Զիրեն շրթունս եւ սիրտ այրեն

Երբեմն երբեմն հուր հառաչանք։

Այդ «սրտազոյն»ի, «դողդոջ ձայն»ի ու «մեղմիկ երգ»ի երեկոյթէն ի վեր, ահագին ճամբայ մը կ'արած անցած է Տիկին Սիրա-

նոյշ իր ասպարէզին մէջ, հաւատարիմ ու խղճամիտ կերպով փարած անոր, ու նոյն խոկայսօր, — երբ հասած է այն աստիճանին ու յաջողութեան որ հայ դերասանին ու դերասանուհիին դերադոյն ըզմանքը կամ իտէպն են, — միշտ ուսումնասիրելու, աշխատելու, կատարագործուելու հետամուտ :

Գեղարուեստասէր ու գրասէր անձ մը, որ ուշագիր հետեւած էր վերջին անգամ Պագուի մէջ Տիկին Սիրանոյշի տուած ներկայացումներուն, իր տպաւորութիւնը սա քանի մը տողերուն մէջ ամփոփած կը գրիէ Մաւիսին. « Համարձակ կարող ենք ասել, որ ո՛չ մի հայ դերասանուհի նրա չափ եռանդով ու երկար չէ աշխատել մեր բեմին համար, եւ իր խաղը չէ հասցրել այնպիսի գեղարուեստական կատարելութեան՝ ինչպէս Տիկին Սիրանոյշը : Սոփոյի, այս միակ բառն է որ իրան առաջնորդ է ընտրած իր դերերը պատրաստելու համար — անընդհատ սոփոյի, ընդմիտ սոփոյի — եւ սովորելով՝ նրա խաղը փայլում է այժմ՝ այնպիսի բարձր գեղարուեստականութեամբ, որ ամենախոստապահանջ հանդիսատեսն անգամ կարող է բերկրութիւն զգալ նրա դերակատարութեան մէջ տեսնելով մարդկային հոգեւոյ ամենանուրբ խորշերը լըւջօրէն ուսումնասիրուած եւ ճշգորէն բացատրուած : Տիկին Սիրանոյշ մի պարզ, վարձկան դերասանուհի չէ որ իր մի քանի դերերը պատրաստելով՝ ոճիկ ստանալուն սպասէ. նա մի առգիսդ է եւրոպական ամենալայն մտքով ըմբռնելով այս բառը. նա միշտ փախուստ կու տայ այն ամէնէն ինչ որ հեշտ է, ինչ որ պարզ է եւ իրան համար դիւրամբուենի : Նա միշտ կը ձգտի դէպ ի դժուարը,

դէպ ի կնճռոտը. ու կը փնտռէ այնպիսի դերեր որի վերայ կարողանայ աշխատիլ, մտածել, խոկալ, եւ մտածելու ստիպել հանդիսականներին : »

Եթէ, չա՛տ տարիներէ ի վեր, Տիկին Սիրանոյշը բեմի վրայ տեսնելու առիթը չենք վայելած այստեղ, ու հեռաւոր արձագանգներէ միայն գաղափար կը կազմենք իր արուեստին մէջ ստացած կատարելագործութիւններուն վրայ, գէթ իր «անընդհատ սոփոյի» գեղեցիկ յամառութեանը մօտէն գիտակից եղողներ կան, — ինչպէս 1899 յունիսին, Արեւելի մէջ գրած մէկ յօդուածով նկարագրած եմ թէ ինչպէ՛ս, Պէյքօղ, ծովեզերեայ փոքրիկ տան մը մէջ առանձնացած, իր ամառնային արձակուրդի երկար ժամերը կը նուիրէր յաջորդ ձմրան նախապատրաստութեանց, ո՛չ միայն սերտելով դերերը, այլեւ ուսումնասիրելով հեղինակը ու խաղին ոգին :

Սրահին լոյսերէն, բեմին զարդարանքէն շլացուած ամբոխի մը անգիտակից ծափերը չէ ուրեմն որ կը իլէ Տիկին Սիրանոյշ իր ներկայացումներու միջոցին — մանաւանդ Կովկասի պէս երկրի մը մէջ ուր ճաշակները այնքան խիստ են ու քննադատները այնքան շատ — այլ իր անդուռ անդադար աշխատանքին գնահատումը, իր ճշմարիտ արժանիքին վարձքը :

Բեմական կեանքէ դուրս ալ, ամէն առպարէզներուն համար, ինչպէս արհեստականին՝ նոյնպէս արուեստականին ու մտաւորականին, իր այդ յատկանիշը ներշնչող օրինակ մըն է :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԵԱՐԵԱՆ.

Դաւիթ Սարգիսեանի այրին ու որբերուն ի նպաստ 669 դրշի նուիրատուութեան ցուցակ մըն ալ կը հրատարակէ Արեւելի : Այս գումարը ուղղակի դրկուած է վաղամեծ ուսուցչին ընտանիքին որուն անմիջական պէտքերուն պիտի հասնի Զատիկական տօներուն առթիւ :

Դրական, կամ աւելի ճիշդը՝ մատենա-

գրական աշխարհէն՝ վերջին եօթնեակին ու չազրաւ արձագանգն էր Եզնիկի «Ընդդէմ Աղանդոց» գործին գերմաներէնի թարգմանուած ըլլալը, Վիէննայի բազմահմուտ Միլիթարեաններէն Հ. Գրիգորիս Գալէմբերեանի ձեռքով, աշխատակցութեամբ Պաւլէրացի հայագէտ գերման Պ. Շմիդ ժողովրդագագետին :



ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ՇԷՔՍՔԻՐԻ ՎՐԱՅ

Ծանօթ գրագէտ Յ. Գ. Մըրմըրեան, որ խստացած է այսուհետեւ իր աշխատակցութիւնը կանոնաւորապէս ՄԱՍԻՍԻՆ նուիրել, մեզ յանձնած է ֆրանսացի իմաստասէր Իբօլիթ Թէնի անգլիական գրականութեան վրայ հրատարակած հըմտալից երկասիրութեան կարեւորագոյն մէկ մասին, — Շէքսպիրի կեանքին ու գործերուն ուսումնասիրութեան, — Թարգմանութիւնը զոր մաս առ մաս պիտի հրատարակենք։ Այս գործը, Թէ իր նիւթովը, Թէ զրուածքին ճոխութեամբը եւ Թէ ընտիր Թարգմանութեամբը մեր բանասիրական բաժինը ճոխացնելու կը ծառայէ եւ միանգամայն օգտակար պիտի գտնայ ամէն անոնց որոնք կ'ուզեն ուսումնասիրել Անգլիոյ Թատերգակ մեծ բանաստեղծը։

ՊԼՈՒԽ Ա.

Շէքսպիրի վարքն ու բնաւորութիւնը. — Իր ծնողքը. — Երիտասարդութիւնը. — Ամուսնանալը. — Դերասան ըլլալը. — Իր «Աղօնիս»ը. — «Սոնէտ»ները. — Տարփանքը. — Բարբը (humour). — Խօսելու տարազը. — Իր անձկութիւնները. — Թէ ինչի մէջ կը կայանայ արտագրող ու համակրական բնութիւնը. — Իր խոհեմութիւնը. — Յաջողութիւնը. — Մեկուսանալը։

Պիտի նկարագրեմ կարգէ դուրս միտք մը, որ Ծրանասացիներուն վերլուծական ու տրամաբանական բոլոր սովորութեանց դիմադար բնութիւն մը ունի. միտք մը ամենակարող, ծայրայեղ, միապէս գերակայ թէ՛ վսեմին, թէ՛ գունդիկին մէջ. միտք մը ամէնէն աւելի կարող՝ ճշդութեամբ ստեղծելու մանրակրկիտ իրականութիւնը, երեւակայականին շնորհիւ լիարժեքները, գերմարդկային կիրքերու խորին խառնուածքը. միտք մը բանաստեղծական, չբարոյ, ներշնչեալ, իր յստակատես յիմարութեան յանկարծական յայտնութիւններովը բանականութենէ գերի վեր. այնքա՛ն ծայրայեղ վիշտի եւ ուրախութեան մէջ, գնացքով այնքա՛ն վակփոյթ, այնքա՛ն տարուբերեալ ու այնքա՛ն ամենի աւելնով լըցուած, որ՝ պէտք է ըսել՝ այս իր դարը միայն կըրցած է երկնեւ այդպիսի զաւակ մը։

Ա.

Շէքսպիրի վրայ ամէն բան ներսէն կը բղխի, ըսել կ'ուզեմ՝ իր հոգիէն իր հանճարէն։ Իր զարգացումը շատ քիչ բան կը պարտի պարագաներուն եւ արտաքին ազդեցութեանց նպաստին⁽¹⁾։ Ան՝ իր դարին մինչեւ ծոծը

թաթխուած էր. այսինքն՝ ճանչցած էր իր փորձառութեամբ գիւղային, ազնուապետատական ու քաղաքային բարքերը, եւ այցելով տեսած էր մարդկային վիճակներու բարձրերը, միջինն ու ստորինը. եւ այսչափ միայն։ Սակայն իր վարած կեանքը սովորականէն դուրս բան մը չէր ունեցած։ Այդ կեանքին մէջ տեսնուած անկանոնութիւնները, ներհակները, կիրքերն ու յաջողութեանքը՝ գրեթէ չատ մօտ բաներ են ուրիշ ամէն անձի վրայ տեսնուածներուն⁽²⁾։ Իր հայրը՝ բուրգէ ձեռնոցի վաճառական մըն էր, շատ դիւրակեաց մարդ մը, որ ամուսնացած էր գիւղացի ժառանգորդի մը հետ, որ իր փոքրիկ քաղաքին դատապետն ու նախստաիկանն (alderman) ըլլալու վիճակն ալ ձեռք բերած էր։ Բայց երբ Շէքսպիր տասնեւչորս տարու եղաւ՝ հայրն արդէն կործանելու մօտ՝ ստիպուեցաւ իր կնոջն ստացուածքը գրաւի դնելու, իր քաղաքապետական պաշտօնը ձգելու, եւ իր առեւտուրին մէջ իրեն օգնելու համար՝ իր տղան դպրոցէն հանելու։ Եւ իրտասարդը՝ կըրցածին չափ համակերպեցաւ հօրը, սակայն այդ գործին մէջ՝ չարաճճութիւններ ու փախչողութեանքներ կ'ընէր երբեմն։ Աւանդութեան մը նայելով՝ Շէքսպիր ալ թաղին մեծ խմորներէն մէկն էր եւ նախանձախնդիր՝ իր գիւղաքաղաքին գինիի բարչի կռիւին մէջ ունեցած համբաւը վեր բռնելու։ Կ'ըսուի թէ անգամ մը Պէտֆօրդի մէջ՝ գարեջուրի այս տեսակ մրցումի մը յաղ-

(1) Halliwell's Life of Shakspeare.

(2) Շէքսպիր ծնու 1564ին, մեռաւ 1616ին. իր գրածները սրբագրել սկսաւ 1591ին. իր առաջին հարազատ գործը 1593ին գրածն է։ (Payne Collier).

թուելով՝ դանդաղորդ տուն դարձաւ, կամ մանաւանդ չկրնալով ետ դառնալ, գիշերն անցուց ճամբուն վրայ իր ընկերաշակոյններուն հետ՝ խնձորի ծառի մը տակ։ Այն ատեններն էր որ Շէքսպիր սկսած էր տաղաչափել, ճշմարիտ բանաստեղծի մը պէս աստանդական՝ մասնակցելով գեղջկական աղմկալից հանդէսներուն, դերասանական հովուախաղերուն, եւ ցնծալից դիցարանական ու բանաստեղծական կեանքի ճոխ եւ յանդուգն սրտազեղումներուն՝ այնպէս ինչպէս որ այն ատեն կը տեսնուէր այդ կեանքը Անգղիայի գիւղաքաղաքներուն մէջ։ Ամէն նկատումով՝ զգաստ մարդ մը չէր, եւ ունէր իր վաղահաս ու խենդ կիրքերը։ Տասնեութուկէս տարեկան էր՝ երբ ամուսնացաւ ջոջ ազնուական աղջկան մը հետ, որ իրմէ ինը տարու մեծ էր, եւ ամուսնացաւ՝ բոլորովին հապճեպով։ Կրակի ատեն՝ կրնն արգէն յղի էր⁽³⁾։ Ուրիշ ձախորդ յանդգնութիւններ ալ գործեց։ Հաւանական կ'երեւի որ Շէքսպիր՝ ժամանակին սովորութեան համեմատ՝ գաղտագողի կը մտնէր կ'ելնէր ասդին անդին, «վասնզի, կ'ըսէ Ռալֆսն⁽⁴⁾, մոլեգին փափագ մը ունէր ամէն կերպ գողութեանց՝ այծեամենքու եւ ճագարներու գտնուած տեղուանքը։ Մանաւանդ Սըր Թոմաս Լիւսիի ստացուածքներուն շատ կը փնասէր, եւ ասոր համար՝ յաճախ կը պատժուէր անկէ խարազանով ու մերթ բանտարկութեամբ ալ։ Սըր Թոմաս վերջապէս երկրէն դուրս հանեց զայն։ Այս բանին համար Շէքսպիրը սաստկապէս լուծեց անկէ իր վրէժը, վասնզի իր տեսարաններուն մէջ՝ տխմար դատաւորի դերը տուաւ անոր։» Պէտք է ըսենք նաեւ՝ որ Շէքսպիրի հայրն այն ատենները բանտն էր՝ իր գործերուն անտանելի ձախորդութեան պատճառով, եւ ինք ալ ետեւէ ետեւ երեք զաւակի տէր եղած էր։ Հարկ էր հաց ձարել, եւ ինք ա'լ չէր կրնար ապրիլ իր գիւղաքաղաքին մէջ։ Նշու Լոնտրա

գնաց, եւ հոն դերասան գրուեցաւ. «ստորին կարգի դերասան»։ «սպասաւոր» թատերաբեմին վրայ, այսինքն՝ համբալ կամ թերեւս պարզ կաքաւոյ։ Կան ըսողներ անգամ՝ թէ աւելի վարէն սկսաւ եւ իր հացը ձարելու համար՝ թատրոնին դրանն առջեւ ազնուականներուն ձիերը կը բռնէր⁽⁵⁾։ Ասոնց ո'րն ալ ըլլայ՝ ինք թշուառութեան համեմատաւ եւ զգաց ոչ թէ երեւակայութեամբ այլ անձնական փորձով։ Շէքսպիր՝ իրապէս վիրաւորուեցաւ անձկութեան, նուաստութեան, արհամարհանքի, բռնի աշխատութեան, հրապարակային անպատուութեան եւ դավալական բրտութեան սուր հարուածներովը։ Կատակերգակ ալ եղաւ։ Տխուր արուեստ, որ ամէն ատեն անարգ բան մը եղած է՝ ստիպուած ըլլալով դիմանալ ներհակներու եւ ստութեանց, եւ աւելի անարգ՝ այն ատեններն ամբոխին խփոթութեանց երեսէն, որ օր չէր ըլլար դերասանները չքարկոծէր։ Շէքսպիր կը զգար այս անարգութիւնը, որուն վրայ սիրտի դառնութեամբ կը խօսէր։ «Ափսոս, շատ ճշմարիտ է որ աստանդական թատրուեցայ ես, եւ ինքզինքս ծաղրածու մը ըրի՝ հասարակութեան ի տես, հոգիս արիւնի մէջ եւ շատ վար գինով ծախու հանելով ամէնէն սիրելի գանձերս»։ — «Բաղդին շնորհէն ինկած, կ'ըսէ դարձեալ, ինկած նաեւ մարդկութեան աչքէն, միս մինակ նստած կ'ողբամ՝ վիճակիս գձձութիւնը, ինքիր վրաս նայելով՝ կ'անիծեմ՝ ձակտիս գիրը, ա'խր քաշելով ինքզինքիս համար՝ հարստութեան, յոյսի, գեղեցկութեան ու բարեկամներու, իմ լաւագոյն ստացուածքներէս զզուած, նզովելով ինքզինքս ալ»։ Եւ ետքն՝ այս երկարահեծ զըզզինքս ալ»։ Եւ ետքն՝ այս երկարահեծ զըզզուանքին հետքերը պիտի նշմարուին իր մեկամաղձոտ անձերուն մէջ՝ հոն ուր կը խօսի ինք «Իր դարուն խարազանի հարուածներուն եւ անարգութեանց, հպարտներուն թշնամանքին, սեղանաւորներուն ժպրհութեան ու այն անարգ ստորնացումին վրայ, զոր համբերատար արժանիքն ստիպուած է կրել աւարժաններու ձեռքէն, եւ կը կրէ նոյն իսկ

(3) Պ. Հալիուել եւ ուրիշ մեկնիչներ կը ջանան ապացուցանել՝ թէ այն ատեն սկզբնական հարսնախօսութիւններն էին ամուսնութեան բուն արարողութիւնը, թէ Շէքսպիրը այս հարսնախօսութիւնները կատարած էր, եւ թէ իր այս ընթացքին մէջ օրէնքէ դուրս բան մը ըրած չէր։

(4) Հալիուել, 123։

(5) Այս զրոյցները բոլորն ալ աւանդութիւն են, ուստի թիչ շատ տարակուսելի. բայց միւս բաները հաստատ իրողութիւններ են։

երբ իրեն ձեռքն ալ է պարտավճար րլլալ եւ ազատիլ վեց բթմամատ երկաթի մը ծայրով» : Սակայն՝ այդ գոեհիկ վիճակին ամէնէն անտանելի կողմն այն է որ կը խեղդէ հոգիին ձայնը : Հապիտներու հետ կենակցելով՝ մարդ ինք ալ հապիտ կ'ըլլայ . զուր կը ճգնի պըղծութենէ զերծ մնալ . երբ բնական տեղը աղտոտ է՝ անկարելի բան է որ չպլչիւս : Հոն զուր կը ճգնի մարդ վեր ձգտիլ , հարկը վար կը մղէ ու կը պղծէ : Արուեստակերտ կազմածներու զարդերը , թատերական զգեստներու ցնցոտի խառնակութիւնը , մոմաճարպներու եւ աշտանակներու գարշահոտութիւնը . որ հակադրութիւն մը կը յօրինեն փափուկ ճաշակի ու մեծութեան շքեղ ցոյցերուն դիմաց , հանդիսադրութեան բոլոր խարէութիւններն ու աղտոտութիւնները , սուլումներու եւ ծափերու շանթահարիչ դարձուդածը , ամէնէն բարձր ու ամէնէն ստոր բնկերութեանց տեսակցութիւնը , մարդկային կիրքերու հետ խաղալու սովորոյթը՝ ասոնք շուտով գիծէն դուրս կը հանեն հոգին , ծայրայեղութեանց զառիվայրը կը մղեն զայն , կը հրապուրեն զայն իրանամերկ պտըտելու՝ նշաւակ խցիկներու արկածներուն եւ կատակերգուհիներու տափանքին : Ինք Շէքսպիր ալ Մոլիէրի պէս՝ չկրցաւ զերծ մնալ այդ բաներէն , եւ անոր պէս իր սիրտին ալ ցաւ եղան ստոնք . ինք ալ բաղդը կը մեղադրէր « իր վատագործութեանց համար » . կ'ըսէր թէ « ապրելու համար՝ բաղդն ինծի տուած էր միայն հասարակ մարդու միջոցներ , որ պատճառ կ'ըլլան հասարակ մարդու վարք մը առնելու » : Լոնտրայի մէջ շատերուն բերանը կը պտըտէր ⁽⁶⁾ թէ իր խաղակիցը Պուրպաճ , որ Բիքար Գի դերը կը կատարէր , Միջնաքաղաքին բնակիչներէն միուն կնոջն հետ ժամադիր եղած ըլլալով՝ « ինք Շէքսպիր առաջ ներկայացաւ կնոջը , որ աղէկ բնդունեց զինքը . եւ մինչ երկուքն առանձին զրաղած էին՝ Պուրպաճ վրայ հասաւ . Շէքսպիր իմաց տուաւ հեռուէն անոր թէ՛ պէտք է գիտնաս որ Աշխարհակալ Կիյեոմ ⁽⁷⁾՝ Բիքար Գիէն առաջ (վեր) էր » :

⁽⁶⁾ Զրոյց 1602ին գիրի առնուած , ըստ Թուլի դերասանին :

⁽⁷⁾ Շէքսպիրի անունն՝ Ուիլեամ էր :

Ընթերցողը թող համարի այս բանն՝ իրր օրինակ մը Շէքսպիրեան հանճարաբանութեան եւ այն շատ թեթեւ կնճիւղներուն , որ կը յօրինուին եւ իրարու կը բախին այդ կարգի յատակներուն վրայ :

Թատրոնէն դուրս՝ կը կենակցէր նա նորասէր ազնուական երիտասարդներու հետ , Բէմպրոքի , Մոնկոմէրի , Սաուդամբլընի ⁽⁸⁾ , եւ ուրիշներու , որ իրենց տաք եւ համարձակ տղայութիւններով՝ կը մարմաջեցունէին իր երեւակայութիւնն եւ զգայարանքը՝ իտալական հեշտութեանց ու պերճութեանց ընդօրինակութեամբ : Ասոնց վրայ եթէ աւելցունէք իր բանաստեղծական բնութեան թափն եւ յուզումը , եւ տեսակ մը ուսուցումն ու եռեւեղին այն ամէն ուժերուն եւ բաղձերուն , որ կը գոյանան այդ տեսակ գլուխներու մէջ՝ երբ աշխարհ , առաջին անգամ , կը բացուի իրենց առջեւ , պիտի հասկընաք այն ատեն Աղոնիսը « իր հանճարին նախկին ժառանգը » : Իրա՛ւ ալ , առաջին ազդակ մըն է ան . եւ այդ ազդակին մէջ բովանդակ մարդն ի յայտ կու գայ : Երբէ՛ք տեսնուած չէ սիրտ մը այնքա՛ն բարասուն՝ գեղեցկութեան եւ ամէն գեղեցկութեան հետ շփուումին ատեն , այնքա՛ն յախշտակուած իրերու թաքնութեանէն ու փայլէն , այնքա՛ն սաստիկ եւ այնքա՛ն յուզուած պաշտումի եւ վայելումի մէջ : Եւ այնքա՛ն ամեհութեամբ ու բովանդակութեամբ գահավէժ հեշտութեան մինչեւ յատակը : Միա՛կ է իր Վէնիսը . Ռիդիէնի ⁽⁹⁾ ոչ մէկ նկարին ներկուածքն՝ անկէ աւելի փայլուն եւ հեշտագին չէ : Դէնդորէյի կամ Վերոնեսի ոչ մէկ դիցուհին անկէ աւելի ու գեղանի չէ « որոնք անկէ աւելի անյագութեամբ չեն պակշտոտ իրենց շուրթերով համրոյրներու ողջումին մէջ » , որոնք անկէ աւելի հզօր դողափոփում մը չունին կըսն եւ նորատի իրանի մը փաթտուելու ատեն , մերթ դեղնած եւ ոգիասպառ , երբեմն « կարմրած ու հրատի նման կրակ դարձած » ինքիմէ դուրս ելած , զայրացած , եւ ազալ յանկարծ ծունկի

⁽⁸⁾ Տասնեւինը տարու էր Սաուդամբլընի կոմսն՝ երբ Շէքսպիր անոր ուղերձեց իր « Աղոնիս »ը :

⁽⁹⁾ Տես Ռիդիէնի « Գիցական տարփանքը » , Պէննէյմի զգեսակին մէջ :

եկած արտասուազին, նուազուն. ետքը մէկէն ի մէկ նորէն կանգուն «բերաննին փակւած» խղճելով իրեն յանդիմանութիւնները, նքողած եւ անգուի մը պէս «լափելով լափիլի-գելով» ու դարձեալ լափելով ի յագուրդ իր անյագ անորժակին: Ամէն զգայարանքը վարակուած են. աչքերը շլացած դողդոջող ճերմակ մարմինէն, նոյնպէս սիրտն ալ ուրկէ բանաստեղծութիւնը դուրս կը պոսթկայ: Եւ իրտասարդութեան պատարուն թափը՝ կը սրդի անկենդան իրերու վրայ անգամ. նորածագ լյսին գիւմը՝ գիւղն ամբողջ կը ցնծայ ինդալով, եւ օդն ալ պայծառութեամբ ուղղուն՝ հանգէսի մը կը փոխուի: «Արտոյտն՝ իր նամէտ բունիկէն սարերն ի վեր կը բարձրանայ՝ արթունցընելով առաւօտը. արշալոյսին արծաթի ծոցէն դուրս կու գայ արեւն աւննափառ, եւ անոր նայուածքն այնքան չքելութեամբ կը լուսաւորէ աշխարհը, որ նոճիներու կատարներն ու բլուրները՝ թխադոյն ոսկիներու փոխուած կ'երեւին»: Երե-

(10) Բողոքանքէք Ալֆրէտ տը Միսէի առաջին բանաստեղծութիւնները, «Իտալական ու սպանիական պատմութիւններ» անունով:

ւակայութեան եւ աւիւնի սքանչելի զեղխանք մըն է առ, որ միանգամայն խռովիչ ալ է. այսպիսի խառնուած մը աւելի հեռունները կրնայ տանիլ⁽¹⁰⁾: Լոնտոնայի մէջ տարիակին մը չէր մնացած, որուն սեղանին վրայ Ադունիս մը չըլար⁽¹¹⁾: Թերեւս ինք Շէքսպիր ալ նըշմարեց որ չափէն անդին անցած էր, վասն զի իր երկրորդ քերթուածին՝ Լոկրիսիայի թռնաքարոսքեան՝ իմաստը բոլորովին հակառակն էր առաջինին. սակայն՝ թէպէտեւ ինք պէտք եղածին չափ լայն միտք մ'ունէր, որով միանգամայն ընդգրկելու կարող էր իրերու երկու ծայրերը, ինչպէս չափ ետքն իր տառաւնեւուն մէջ՝ դարձեալ չիրցաւ ինքզինքն ամուր բռնել, եւ յաճախ վար սահեցաւ զանիվայրէն: Իր կեանքին մեծ գործն եղած էր «անուշ անձնատուութիւն մը դէպի տարփանքն»: Բնութեամբ գորովազուծ եւ բանաստեղծ էր. ասջափն ալ բաւական է մարդու՝ կիրքով բռնուելու, խարուելու, վշտակրելու եւ անդադար ընթանալու համար պատրանքի ու վիշտի չըջանալին վրայէն, որ կը դառնայ ինք իր վրայ անվերջ բոլորումով:

(11) Գրողի, առ Չասլի, «Շէքսպիրի վրայ»:

Ա Շ Խ ԱՅ Ա Կ Ի Ց Ն Ե Ր Ո Ւ Շ Ո Ւ Ր Զ Ը

Դ. ԶՕՆԲԱՊի վերերեւումը Մասիսի մէջ, իր հոգեբանական սքանչելի նորապէսովը, այնքան հաճելի տրպաւորութիւն մը բողոքած է մեր ընթերցողներուն վրայ, որ անոնցմէ ոմանք գրաւորապէս ալ խնդակցութիւն յայտնեցին խմբագրութեանս: Յայտնուած կարծիքներուն մէջէն վեր կ'առնենք զրատեր օրիորդի մը սա տողերը. «ՄԱՐԱՊԵՏը իր պարզ ու իմաստ ձեւին տակ՝ այն տեսակ խորունկ ուսումնասիրութիւն մըն է կնոջական սրտի, որ փրանսերէնի բարգամանելով, օրինակի համար, պիտի կրնար մրցիլ եւրոպական որեւէ առաջնակարգ հեղինակի նորապէսներուն հետ: Մէղք որ Զօնրապ էֆենտիին գրական արտադրութիւնները աւելի յաճախ կարդալու բաղդը չենք ունենար»: Այս ցար կամ կարօտը, որ նամակագիր օրիորդինը չէ միայն, առիթ կու տայ մեզի ըսելու թէ մեր տաղանդաւոր բարեկամը իր իրաւաբանական ծանրագրաւ գործերուն ներած ջափովը միայն կրնայ ինքզինքը նուիրել գրականութեան: Բայց Մասիսի վրայ իր ունեցած մասնաւոր համակրանքը վշտանութիւն կու տայ մեզի վայելելու միշտ իր քանկագին աշխատակցութիւնը, թէեւ պարբերաբար:

Յաջորդ քիտով բաղդ պիտի ունենանք նաեւ հրատարակելու արձակ գրուածք մը մեր համակրելի աշխատակցութիւն՝ Սիմի-Լէ. ինչպէս այսօր կը սկսինք ԱՂԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍԵԱՆԻ «Տխուր Թելեր»-ուն զգայուն շարքը որուն ամբողջութիւնը նոր հրապոյր մը պիտի աւելցնէ Մասիսի քնարերգական բաժնին վրայ, որուն կարեւոր մէկ մասը կը գրուէ Մ. ԱՃԷՄԵԱՆ, փիլիսոփայ-բանաստեղծը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի



ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ

ԱՆՏԻՊ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Կը լսենք թէ Տ. Հմայեակ քահանայ էքսէրճեան, որ հրատարակեց արդէն Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը՝ բանաստեղծին ոտանաւորներուն ու արձակ գրուածքներուն երկրորդ տպագրութեամբը մէկտեղ, ձեռնարկած է նոր հատորի մը պատրաստութեան, ՄՈՒՅՈՒԱԾ ԷՋԵՐ՝ որուն մէջ պիտի ամփոփուին Դուրեանի կարգ մը անտիպ ձեռագիրները, որոնցմէ մէկը առաջին անգամ ՄԱՍԻՍԻ մէջ հիւրընկալելու բաղդաւորութիւնը կ'ունենանք։ Բարեկամի մը ուղղութեամբ նամակ մըն է ասիկա, բանաստեղծին յատուկ ցաւատանջ զգացումներով ու մեղամաղձոտ խոհերով լեցուն, բարեգործական հանդէսի մը առթիւ գրուած։

1871 Յունիս 30

Պարոն,

Ներեցէք եթէ պատասխանաւ ակամայ քիչ մը երկարաձգեցի։ Շնորհակալ եմ Ձեր այդ ողջոյնէն։ սիրեցի այդ ողջոյնը՝ ծարաւի հանձարի մը այդ ջերմ ընդգրկումը։

Ձէք խարուեր։ այն համեստ գաղափարները՝ որոնք որոտալու հետ բուրել, շանթելու հետ բուժել գիտեն՝ այն գաղափարները պատրաստ եմ շինել իմ կողմէս։

Սակայն կը ցաւիմ որ չեմ բոլորովին, զոր դուք կը նկատէք Ձեր պէտքով գրելով։

Այն դասիները զորս դուք իմ ճակատի բողբոջ կը զոյժաք, կը ճնշեն արդէն ճակատս։

Ի դուր կը թոթվէք Ձեր ծաղկապսակ քնարը, հանձարի այդ վեհ սիրտը ի զս'ւր կը սարսէք։

Թոյլ տուէք, ազնիւ բարեկամ, որ Ձեր այդ ջերմ համակրութեան դիմաց սիրտս լուռ դողդոջէ։

Դուք զիս լաւ նկարագրեր էիք, արտօսի պէս լռիկ եւ հառաչի պէս մթին, դուք որ երկնից ցուքերուն նման խայտալ եւ շանթի նման որոտալ գիտէք։

Խօսեցէք եւ սաւառնեցէք, պերճախօս բարեկամ, եւ թոյլ տուէք որ բեւեռային երկրի պէս ցուրտ՝ ասուր եւ դալկահար ճակատի մը վրայ՝ լոկ լուռ խորչումներ ծալլուին, ցաւոց թերթեր, եւ հանձարը շրթանցը մէջ մեռնի, քանի որ Ձեր կրակոտ ճակատը անգամ պերճախօս հանձարի մը բեմ կը ներկայէ։ Ձեմ ուզեր հոս խօսքս երկարել։

Սրտերու խօսակցութիւնքը տերեւներու չուքին վերապահէնք, ազնիւ բարեկամ...

Այնպիսի նիւթեր ունիմ՝ որոնց վրայ խօսելու տեղ մերթ որոտալ՝ մերթ բուրել՝ մերթ սարսուիլ հարկ է։ Վսեմ յիշատակներ, խօսմանց վրանին տակ դողդոջ հրեշտակներ են ասոնք։

Պիտի խօսիմ ասոնց վրայ որչափ որ արտասանելու համար շուրթերս այրին։

Այն նշանաւոր օրը պիտի յիշատակեմ, յորում իրարու ձեռք թոթուեցինք, այն օրը՝ յորում ամէն հոգի զմայլում մ'ունէր։

Կ'ուզեմ բարեգործական այն հանդէսէն վսեմ գործերու փունջ մը քաղել։

Կարի կը գուրգուրամ այն հանդէսին վրայ, զի մէկ հատիկ է։

* * *

Հորիզոնին վրայ վարդերու հրդեհ մը կը ծաւալէր։ Լյսերն անգամ խրտչիլ տոգունիլ եւ մարմիրի կ'սկսէին։

Թաւուտքի մը դայլայիկը Մայիս 30ի առաւօտը կը հծծէր։

Բիւզանդիոնի կապոյտ դօտին կը ծփծփար։ Ճակատս երազներու օրօրոց մը դարձած էր, կը դողդոջէին։

Ոսկեզօծ սարեր ընդհնամարեցի, վարդերու աճիւնին մէջէն կայծ մը կը բարձրանար, երկընքի լուսալիր բիրը։ Լուրջ Վոսիօր մը կը ծիծաղէր, կ'ունէր ու կը փրփրէր, կը սոնքար։ Նուագներու, կեցցէներու եւ ծափերու ներդաշնակութիւն մը, սրտագրաւ ժխոր մը Գուգիւնճըքի նաւամատոյցը թնդացուց։

Շողեհաւ մ'էր այս ժխորը շնչող։ սրտեր կը բարբախէին, ամէնը գունաթափ էին, կը հեւային։

Երեւակայէ՛ զիս ալ, բարեկամ։

Ձեմ գիտեր թէ ինչպէ՛ս ինքզինքս այս շոգեհաւը նետեցի :

Կը քալէինք , կ'երազէի , կուրծս դաշնակ մ'էր եւ հոգիս մեղեդի մը : Յանկարծ ձայն մը զիս ցնցեց , տեսիլ մը սառած նայուածքս յափշտակեց , երիտասարդ մ'էր այն , տոգոյն այտերէն խարտեաչ մօրուք մը վար կը թափէր , կարծես թէ այն անձին ներսը սրբազան բան մը կ'որոտար , իրեն հետ ձայնն ալ կը դողդոջէր , ձեռքը գանձանակ մը կար . . . ա՛հ , այդ անձը . . . լուսնոյ այդ սիրահարը , յառաջադիմութեան աշակերտը , թշուառներու անդունդին հսկող այդ լոյսը , ճանչցի եւ սարսուացի . Պ. Գէորգ Չոպանն էր այդ անձը , պարծանօք եւ յարգանօք կը յորջորջեմ , փա՛ռք իրեն որ մէկ քանի տարիէ ի վեր հանդէսներու մէջ իր գանձանակովը կ'երեւի , ամբոխը կ'ակնածի այդ պատկառելի մուշկապիտէն , սրտէն կուտայ :

Այդ գանձանակն ինկած լումաներն հին գլուխ մը շարժելու կը ծառայէին , ուր գաղափարք ժանգոտած են :

Աշխատի՛նք որ մեր վարժարանները վերականգնելու տքնող այդ առաքեալներուն ճակտին վրայ միտացող քրտունքը չսառնին :

Երանի՛ր անոնց՝ որոնք իրենց անշուք կեանքին հետ հսկայ փա՛ռք մը կը տանին :

* * *

Ձեմ դանդաղիր մատուցանել իմ անկեղծ շնորհակալութեանդ հանդէսը կազմակերպող մարմնոյն :

Այս տարի աւելի շքեղ էր իր ճակատը , աւելի մեծ էր իր փառքը , վասն զի Հիսարի դպրոցին աղքատիկ աշակերտուհեաց անմեղ սրտերն ալ ծափահարեցին :

Կը փութամ շնորհակալ ըլլալ որբերու մեծանձն բարեկամին , որ բարեհաճեցաւ Ս. Փրկչեան վարժարանի աշակերտներն չգրկել հանդէսէն :

Ս. Փրկչեան որբե՛րը , անդունդը թափած այդ շողերը , ա՛հ , անոնք ո՛րչափ շնորհակալ ըլլալ գիտեն , իրենց ձեռքը սեղմող ձեռքին մէջ դողդոջալ՝ եւ փայփայած ատեն փղձկիլ կը սիրեն , արտօսար անոնց հոգիէն կը բզկտի , անոնք աշխարհի վրայ բարերար սրտի սիրահար են լոկ :

Հանդէսին ներկայ գտնուող այդ որբոց մէջ չտեսի մէկը որ ժպտէր կամ զմայլէր . ամենքն ալ տխուր էին եւ կ'ապէին , մութ էին իրենց ճակատագրին պէս :

Օրհնեա՛լ ըլլայ այդ թշուառներուն բարեկամը , թո՛ղ ինք այդ որբոց ալօթքը հետը տանի , անոնք ալ իր յիշատակը . ինք որչափ անունը ծածկէ , փառքը չի կրնար ծածկել :

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՍ

ԱՆԳԻՐ ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՌԱՋԻ ԳԵՂԻՍՏԻՆԻՆ ԱԼ ԿՈՇԱԿ ԻՐ ԱՈՒՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԱՅՈՒՄՈՒԹԻՒՆԸ ԸՆԵԼ ԻՐԵՆ ԳՈՒՐԾԱԿԻ ՌՇՈՎԸ ՈՒ ՄԱՆՐԱԴԵՎԵՐՈՎ ԽԱՈՆ ՈՐՈՆԵՐ ԱԽՈՐԺԵԼԻ ԱԿՏԱՎԻՍՏԻՆԻՆ ՄԸ Կ'ԸՆԾԱՅԵՆ ԸՆԴՉ ՆԻՍՅԵՐՈՒ ՄԵՋՈՒԹԵԼ :

Թէեւ Պալաէճիկի մէջ ծնայ , բայց հոն երբեք չապրեցայ . աչքս բացի չբացի՝ ես զիս գտայ ծակի մը մէջ յենտիգուլէ , որ կ'ըսուէր Անառականոց : Ինչո՛ւ հոն էի . — 1880 ի Ազգ. Զոյգերուն մէջ գրուած է . «Վահան վար. «Դապետ այնչափ բարի զուակ մըն էր որ իր «ճննդենէն երկու ամիս առաջ հայրը մեռաւ , «իր տղուն երեսը չտեսնելու համար . երկու «ամիս ետքն ալ մայրը հոգին փչեց իր զու- «կին երեսը տեսած ըլլալուն համար . . . » :

«Թաղ. Խորհրդոյ որոշմամբ՝ 1858ին Փրկիչ կը «ղրկվի . բայց հոն ալ խեղճ չնստիր . դասերը «սորվելու տեղ՝ ճանճ սրալու արհեստը կը «մշակէր : Կառավարիչն՝ անկարող այս աշա- «կերտն ի կարգ բերելու , Անառականոց կը «դնէ զայն , որպէսզի հոն սորվի իր չգիտցած «անառակութիւնները» :

Հաղիւ թէ 7—8 տարու էի , քանի՛ քանի՛ անգամ փորձեցի այդ ծակէն պրծիլ , միշտ պատերէն վար ցատկելով , այլ միշտ բռնուե-

ցայ եւ միշտ սիւնակապ եղայ : Գիտէ՞ք թէ սիւնակապի պատիժը ի՞նչ էր . — անպատկառ անառակի մը գիշերն ամբողջ սիւնի մը կապուած ըլլալը :

Այն ատեն երկու ամիրաներ կային . Տատեան Յովհաննէս եւ Պօղոս : Յովհաննէս պէյ տէր ու տիրական էր որբերու , մանաւանդ անառակներու . իսկ Պօղոս պէյ՝ հիւանդներու , ծերոկներու եւ խենդերու :

Ու եղաւ որ Աստուած ա՛լ աւելի սիրէ անառակները քան զզատները : Յովհաննէս Ամիրայի ձին Մաքրգիւղ երթալու ճամբէն կը շեղի , եւ դէպի Փրկիչ կ'ուզուի . ի զուր Ամիրան կը փորձէ ձին մտրակել որ կը յամառի : Ամիրան մտածելով որ մի՛ գուցէ իր ձին Բաղամու իշուն պէս զինքը հոն տանիլ ուզէ , — ուր օրհնութիւն ըլլալ պէտք է , օրհնութիւն տալ պէտք է , — ստնծարձակ կը թողու ձին , որ շիտակ Փրկիչի դռնէն ներս կը մտնէ : Եւ գիշեր էր :

Ամիրան հոն ժամուն մէջ աղօթելէ յետոյ՝ իր սրտին սիրական տեղը կ'երթայ , Անառականոցը , եւ զիս տեսնելով սիւնակապ , հարցուց . « Ո՞ր տեղացի ես :

— Պախչէճիկցի :

« Հայր մայր ունի՞ս :

— Զխտեմ :

Ամիրան ետին դառնալով կ'ըսէ Տեսուչին . « Աս աղեկը վաղը , որ է կիրակի , Պէշիկթաշ իմ տունն զրկեցէք » :

Եւ Ամիրան վերստին ժամուն մէջ աղօթելէ յետոյ՝ կը կանչէ Տեսուչը եւ կ'ըսէ . « Քանդեցէք հիւսն այդ Անառականոց շէնքը եւ անառակները զգաստ տղեկներուն մէջ խառնեցէք » :

Ինչո՞ւ այս տղերքը կը գրեմ . — յիշելու համար թէ ազգն այն ատեն ունէր մեծ բարերարներ : Պէգճեան , Տատեան , Պալեան , Գարաբէհեան էպրու Հանըմ իրարու ետեւէ իրարու յաջորդող գթութեան արեւներ էին , մանաւանդ Յովհաննէս պէյը որ Գիժի մարդն ալ էր :

Թէ բարիքէն չարիք կը ծնի , թէ չարիքէն բարիք , այդ չէ գիտնալու բանը . միայն թէ 1865ի մեծ-քոյերան բարիք եղաւ անոնց ուրոնք Փրկիչի մէջ արգելափակ եղած էին .

քոյերան կը մտնէր Եշտիգուլէ , արգելափակին կամ գառագեղին դռները կը բացուին եւ ահա լեղապատառ փախչիլ ամէնուն : Իսկ ես հեւի հեւ կը վազեմ , Փարասըզ-Քէօփրիւէն Պէյօղլու , անկէ Պէշիկթաշ , վերջապէս ես զիս կը գտնեմ Պօյաճիքէօյ , ուր մայրս Հրանտ Ասատուրի ճաճան էր եւ լուացարար : Քոլերայէն փախստական մը դիւրաւ չի կրնար մտնել տուն մը . ոստիկանութիւնը կը փորձէ զիս ձերբակալել եւ քարանթինայի ենթարկել : Ասատուր աղա կը միջամտէ եւ կ'որոշուի որ ես քանի մը օր հիւր ըլլամ Ասատուր աղայի ձիերուն . . . ախոսին մէջ : Մայրս հիւանդ էր , Պաղչէճիկ գնաց , ուր մեռաւ :

Իսկ ե՞ս . — մտածեցի թէ՛ փարա վաստըկիլ՝ ապրելու համար եւ թէ՛ չարունակել ուսումն որ շատ թերի էր , ուստի Ուն-Գաւիան Պաղչէճիկցի պայտավաճառի մը քով աշակերտ եղայ , պայմանաւ որ տետրակներն ու նամակները գրեմ գիշերները , իսկ ցերեկը Փարասըզ-Քէօփրիւէն Ղալաթիա երթամ Փաւիազեան Ստեփան եւ Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնդիներուն աշակերտիլ : Բայց օր մը վաճառեցայ այդ խառնութէն . յանցա՞նքս . — նախատուած էի աղայէ մը , որմէ վրէժ լուծելու համար , երբ պայտ գնելու եկած էր ան , ըսի . « Կը տեսնե՞ս այս պայտերը , աղաս այս սրայտերը յատկապէս Պախչէճիկի մէջ շինել տուած է ձեզի համար . . . ձեր դտներուն համար » :

Ա՛լ տէր ու տիրական չունէի . վազեցի Պէյօղլու Նորատունկեանին տունը , ուր հիւր էր Գէորգ Կաթողիկոս , էջմիածին երթալու համար : Եղեսեան Յովհաննէս եպիսկոպոս , որ ինքը անառակ մը ըլլալով իմին ալ անառակ մը ըլլալու աղէկ գիտէր , ըսաւ . « Այս Կաթողիկոսը միտք չունի աշխերտ-մաշկերտ տանելու . սա թուղթը ա՛ռ , գնա Ատա (Մեծ-Կղզի) միւս Նորատունկեանին տունը եւ հոն եղիր վարժապետ » : Եւ գիտէ՞ք թէ ո՞վ ըլլայ իմ առաջին աշակերտս . — Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտին : Հոն հազիւ քսան օր մնացի եւ հոռոմ տղեկներու հետ վարուիլ անհնար ըլլալով , որոնք իշարչաւի մէջ աւելի վարպետ էին եւ յաջողակ , կոփամարտեցայ , ձերբակալուեցայ եւ տարուեցայ Պատրիարքարան :

Աշխարհ մութ էր աչքին . ո՛հ , որքան ստոյգ է սա խօսքը .

Երբ մէկ որբուկ
Ձունի տիրուկ,
Խեղճուկ կ'ըլլայ
Երկրիս վըրայ :

Օր մը Մկրտիչ Խաչագոյն վարդապետին հանդիպեցայ որ ազգին մէջ ամէնէն աւելի բաւխաւուած , բայց ամէնէն աւելի ազգին ծառայութիւն ըրած էր . եւ ըսաւ ինծի . « Մըսրիս Արապկիրցի Պօղոս աղան տարուէ տարի հարիւր ոսկի վճարելի կտակ մը ըրած է Հալէպի համար . Պօղոս Պատրիարքին գնա՛ , որ հոն քեզ վարժապետ զրկէ » : Պատասխանեցի թէ ի՞նչպէս կարելի է՝ այդ . — « Դա գէթաներուն մէկուն մէջ յօդուած մը կը գրես եւ կը յաջողիս » :

Ութ օրէ աւելի տքնեցայ , գրեցի , սրբագրեցի , աւրեցի , լզեցի ու նորէն գրեցի սա յօդուածս թէ Եզրպտարնակ ազգային մը տարուէ տարի վճարելի հարիւր ոսկի կտակեր է . . . :

Բայց հրատարակելու համար Մասիսին երթալ եւ խարէութիւն մը ի գործ գնեւալէտք էր , որ յօդուածս ընդունուէր : Ներս մտայ , ներկայացայ Իւթիւճեան Կարապետ էֆէնտիին որ յօդուածս ընթերցելէ յետոյ՝ քմի-ծաղով մը հարցուց . « Ո՞ր տեղացի ես » :

— Հալէպցի :

« Հա , լսեր եմ : Դաւաթիայի դպրատան մէջ աշխերտ մը կայ , դո՞ւն ես ան » :

— Այո՛ , ես եմ :

« Այս լուրն ուսիէ՞ց առիք » :

— Պօղոս Պատրիարքէն , եւ հրամայեց ինձ որ հոն երթամ եւ վարժապետ ըլլամ :

« Աղէկ , աղէկ . հոն երթաս նէ , Մասիսի բաժանորդներ կը գտնես . անանկ չէ՞ » :

— Ինչո՞ւ չէ :

Կայծակնահար պիտի ըլլայի , եթէ ի հաշիւ Մասիսի կանխավճար մը առաջարկուէր :

Չէ՞ք հաւատար . — 1867ի օգոստ. 17ի Մասիսը տեսէք , միայն թէ հոն Պահշէճիկցին Հալէպցի եղած է Մասիսի խմբագրական կնքահարութեամբը :

Բերկրապատար ցնծութեամբ Մասիսի այն թերթերէն քանի մը հատ գրպանեւով , Պօղոս Պատրիարքին ներկայացայ , որ ըսաւ անմիջապէս . « Ծօ տիրացու , աղուոր գրած էիր , չէ՞ք-չնորհք ունիս եղեր ամա , դուն Պաղշէճիկցի ես , Հալէպցի չես » :

— Ծառայ եմ , Սրբազան :

Պատրիարքական յանձնարարագրերով Ստամպուլէն մեկնեցայ :

Այն օրէն ի վեր , 1867էն ի վեր մինչեւ ցայսօր զղջացած եմ Մասիսը խարելուս համար , վասն զի Մասիսը խարելուս երեսէն՝ վարժապետ եղայ , վարժապետ ըլլալուս երեսէն վարդապետ եղայ , եւ վարդապետ ըլլալուս երեսէն եթէ ազգը չօգտուեցաւ , ես հիշ չօգտուեցայ :

Իմ առաջին հրատարակութեանս իմ վրայ ըրած տպաւորութիւնը՝ այս եղած է :

1900 Մարտ 27

Պէշիկթաշ

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԵՐ-ՄԵՆԱՍԵԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿՅԻ

ԳԻՏԱԿԱՆ ԺԱՄԱՆՑ

ՍՈՒՏՆ ՈՒ ԻՐԱԻԸ

« Ի՞նչ ընեմ չիշը , կը բաւէ որ գինովեամ » :
Չեմ յիշեր թէ ո՞ւր կարդացած եմ այս անշահ տողը , բայց ակամայ միտքս եկաւ , երբ իմացայ թէ՝ միայն ոգելից ըմպելիներով չէ որ մարդս կրնայ գինովնալ : Ալգամ-Լուրէնցի բժիշկ մը , Պ. Մէյէր , կարծես մասնաւորաբար սա խօսքը հաստատելու համար ,

բժշկութեան մէջ զարմանալի իրողութիւն մը տեղեկագրած է Լիւսնի Բժշկական Ընկերութեան : Հանքային ջուրով ալ մարդ կը գինովնայ եղեր : Հանքային ջուրը , թէպէտ ֆրանսական բժշկութիւնը ընդունեց առաջին անգամ , սակայն գերմանականը չափազանց ընդհանրացուց զայն , այնպէս որ այսօր ամէն

գեղադիր հանքային ջուրերէն մէկը կը յանձնարարէ խմել :

Պ. Մէյէր տեղեկագրած է թէ յառաջացած վիճակի մէջ եւ 45 տարեկան չաքարախտաւոր մը իր բժշկին կողմէ գերմանական քաղաք մը զրկուեր է , հանքային ջուրերով դարմանում մը ընդունելու համար : Հիւանդը որ բառին բուն նշանակութեամբը ժուժկալ մէկն էր , հոն յայտնի գինովութեան մը աւելն երեւոյթները ցոյց տուաւ իր վրայ . յիշողութեան կորուստ , անչափ ուրախութիւն եւ անբացատրելի պզտիկ քմահաճոյքներ . առաջ Բոլորը հետզհետէ յայտնուեցան իր վրայ : Մասնաւոր քննութեան մը ենթարկեցին զինքը եւ հաստատուեցաւ որ իր լոգանքը ընկէն եւ բժշկին պատուիրածին չափ ջուրը խմելէն ետքը այդ վիճակին մէջ կը գտնուէր . քննութիւնը հաստատեց նաեւ թէ առաջին անգամը չէր որ ասանկ պարագայ մը կը ներկայանար եւ ուրիշ հիւանդներու ալ միեւնոյն միջոցով , այսինքն հանքային ջուրով գինովնալը տեսնուած էր :

Մտածեցէ՛ք անգամ մը ո՞ր պիտի երթայ այսպէս գինովութեան համարին վիճակը , երբ ալքոլին ամէնէն բուռն թշնամիները , թերեւս նոյն իսկ ժուժկալութեան ընկերութեան անդամները , պիտի կրնան գինովնալ հանքային կամ կազային ջուրերով :

Այս մասին լո՛ւնչ պիտի մտածէր արդեօք Սթրազպուրկցի գինովը , որ երկրորդ անգամ ըլլալով քաղքին հիւանդանոցը տարուած էր գինովութենէ ետքը վրան եկած հիւանդութիւն մը դարմանելու համար : Զօրաւոր ըմպելիներու գործածութիւնը այդ մարդուն ջրային դրութիւնը եւ ուղեղին վիճակը չափազանց խանգարեր էին : Այդ Սթրազպուրկցին , որ եպենագործ մըն էր , երկրորդ անգամ հիւանդանոց տարուելուն՝ իր վիճակը , որ առաջ հասարակ երեւոյթ մը ունէր , գինովութեան արդիւնք ըլլալուն համար , սկըսաւ ծանր հանգամանքներ առնել ստամոքսի անսովոր ցաւերու նշաններ յայտնելով : Բժշկիչները չէին ըմբռներ այս ցաւերը ու ամէն դարման անօգուտ կը մնար : Մահը շուտով վրայ հասաւ եւ դիագնոստիկաներ նոր անակնկալ մը պատճառեց բժիշկներուն , մար-

դուն ստամոքսին մէջէն 10 հարիւրորդամէթր երկայն , 5՝ լայն եւ 4՝ հաստութեամբ գլանադրեղով վերջնապէս կարելի եղաւ խնդիրը լուծել . ալքոլի եւ ջրդեղի (վերնի) բաղադրութիւն մըն էր , քարի պէս կարծրացած : Խեղճ եպենագործը այնչափ ալքոլի խենդ դարձած էր որ գինետունը տալու ստակ չունեցած ատենը իր ջրդեղի ալքոլային խառնուրդը կը խմէ եղեր :

* * *

Սուտն ու իրաւը միեւակ գինովութեան մէջ չէ անշուշտ որ երեւան կուգայ , — թողո՞ւնք որ ամէն իրաւ ու ճշմարիտ իր սուտն ու խաբեբան ունի : Թրանսվալի պատերազմը օրուան նիւթ բրած է թանկագին մետաղներուն վրայ խօսիլ , մանաւանդ ադամանդին , Սէսիլ-Բոտսի այդ իտէպլին վրայ , որուն նմոյշները զմեզ կը սքանչացնեն , առանց իսկ մտածել տալու որ մեր զմայլումի ատ առարկաները , պարզ ածուխի կտորուանքներ են , քանի որ քիմիագիտութիւնը մեզ կը սորվեցնէ թէ ադամանդը պարզապէս հանքածուխ է , բնութեան ո՞վ գիտէ ի՞նչ քմահաճոյքով բիրեղացած : Այս գիւտէն ետքը , սաչափ միայն հասկցուեցաւ որ ադամանդը յախճապակիի փուռին մէջ , ինչպէս նաեւ Զիրնհաուզէնի տաքութեան մէջ կը հալէր ու կ'անէանար : Անշուշտ մեզմէ ոչ մէկը , մանաւանդ ընթերցողուհիները , պիտի ուզէ այդ փորձը կատարել իր ադամանդներէն մէկուն վրայ , քանի որ ադամանդը արժէքաւոր նիւթ մըն է եւ այս միջոցին ալ պատերազմին հետեւանօք արժէքը բարձրացած :

Ադամանդին գինը , տաշուելէն ետքը , մեծութեանը ու մաքրութեանը համեմատ կը փոխուի : Ատ շողջողուն քարին թափանցկութիւնը պէտք է որ հաւասար ըլլայ բիրեղացած , աղբիւրի մը ջուրին փայլին ու մաքրութեանը քանի որ երբ ադամանդի մը համար աղէկ ցուր ունի կ'ըսեն (ըստ ոսկերչական լեզուի) անոր պայծառութիւնը գովելու համար է : Լաւ «ջուր» ունեցող ադամանդները որչափ խոշոր ըլլան՝ այնչափ հազուագիւտ ու սուղ կը գտնան , բայց ոչ համեմատաբար . օրինակի համար 1000 դրչ. արժող աղուոր ա-

դամանդի մը քով, տասնապատիկ մեծութեամբ ուրիշ նոյն «Ջուրով» ադամանդ մը 10,000 զրոյ արծելու տեղ, շատ աւելի կ'արժէ. կրկին մեծութեամբ ադամանդ մը՝ 6½ անգամ, երեք մեծութեամբ՝ 729 անգամ եւ քառապատիկը՝ 4096 անգամ աւելի ու այսպէս բազմապատկուելով կը շարունակէ :

Առանց խօսելու Գրիգէր նախագահին ադամանդին վրայ, աշխարհիս մէջ հիմակուան գտնուած ամէնէն մեծ ադամանդները հետեւեալները կը համարուին .

Ամէնէն խոշորը Պրագիլիոյ հանրապետութեան ինչքն է, որ առաջ Տօմ Բէտրօ կայսեր կը պատկանէր եւ 1730 քրադ կը կոչէ . եթէ իր փայլին մէջ քանի մը պակասութիւն չունենար, անգնահատելի արժէք մը պիտի ունենար, թերեւս երկու միլիառ : Այս պակասութեան պատճառաւ Անգլիոյ թագուհին ունեցած Մեծ Մոնկոյը, որուն Քօ-նի-նուր (լոյսի լեռ) անունը կուտան, ամէնէն արժէքաւոր ադամանդը կը մնայ իր 279 քրադ ծանրութեամբը :

Ռուսիոյ Կայսրը իր թագին վրայ կը կրէ Օրլօքը զոր Բօնդիշերիէն Փրանսացի գինուոր մը բերած է :

Ռեթանը (ինամակալ) Ֆրանսայի ամէնէն մեծ հարստութիւնն է . 137 քրադ ծանրութեամբը երեք միլիոն ֆրանքէն աւելի կ'արժէ :

Այս ցանկը կրնայ դեռ շատ երկարիլ . բայց լաւագոյն է ընդհատել եւ երեւակայութենէն իրականութեան գալ, որովհետեւ ամէն մարդու տրուած չէ անանկ քար մը գտնել որ թէ՛ մեծ, թէ՛ փայլուն եւ թէ՛ ճշմարիտ ըլլայ, քանի որ փողոցի քարերուն մէջ խառնուած չի կրնար ըլլալ . եթէ սակայն Պ. տը Պիւզ ատոր ալ ճար մը չգտնէ : Այո՛, մի՛ զարմանաք, այդ մարդը հանճար մըն է . Պիւզի Պ. կոմսը ճշմարիտ ազնուական մը, կենցաղագէտ մարդ մը ըլլալէ զատ, արուեստագէտ գոհարավաճառ մըն ալ է եւ ճշմարիտ երկրախոյզի մը պէս շատերէն աւելի ճամբարդած : Իր մէկ ուղեւորութեանը միջոցին, Ուրալ լեռներուն հիւսիսային կողմը,

գրեթէ Սառուցեալ Ովկէանին եզերքին մօտ զարմանալի քարերու հանք մը գտաւ : Թէպէտ ադամանդէ շատ աղէկ ճանչցող գոհարավաճառ մը, բայց վայրկեան մը ինքն ալ խաբուեցաւ . ձեռքին մէջ բռնած խոշորկէկ քարը մեծարժէք ադամանդ մը կարծեց : Լաւ մը քննելէ ետքը հասկցաւ սակայն թէ խաբուած էր, եւ վայրկեան մը առաջ իր ոտքին տակ սփռուած այդ անգնահատելի հանքին իրեն երազել տուած անագին հարստութիւնը թուաւ գնաց : Բայց խորհող մարդ մը այդչափ շուտ չէր կրնար յուսախաբ ըլլալ . քանի որ բնութիւնը իր ունեցած մէկ սքանչելի արդիւնքին յարեւմտեան կեղծն ալ շինելով մարդ խաբելու կը ջանար, ինչո՞ւ ինքն ալ աղէկ դաս առնելով եւ ազնուականութեան մարդուս տուած համբաւի սահմանին մէջ այդ հանդիպումէն օգուտ չքաղէր :

Ուստի Բարիզ դառնալով բողոքովին նոր ճարտարարուեստ մը հիմնեց որուն գիւտը բնութիւնը ցոյց տուած էր :

Բայց ինք խաբել չէր ուզեր, ամէն տեղ յայտարարեց թէ իր ադամանդները կեղծ էին, սա տարբերութեամբ որ ճշմարիտին հետ կրնային մրցիլ չողի ու փայլի տեսակէտով. եւ սուտն ու իրաւը իրարմէ զանազանել անկարելի պիտի ըլլար՝ եթէ չըսուէր թէ սուտ մը, կեղծ մը կար մէջտեղը :

Կոմսին հիմնած ճարտարարուեստը այսօր մեծ ընդունելութիւն գտած է եւ շատ չիք ու պչոող կ'իներ, որոնք համբաւ հանած են իրենց արդուգարդովն ու ադամանդներովը, իր հաւատարիմ՝ յաճախորդներն են : Մինչեւ իսկ ստիպուեցաւ, իր գործի կեդրոնատեղիէն զատ՝ Բարիզի մէջ, ինչպէս նաեւ Նիս, Վիչի, Պիարից, եւ հարուստ ու պերճ դասուն ժամադրավայր դարձած ուրիշ տեղեր մասնաճիւղեր բանալ, այնչափ իր ադամանդներուն առեւտուրը ծաղկեալ վիճակի մէջ է :

Ահա երկու կեղծեր զորս կ'արժէր արձանագրել Գիտական Ժամանցի էջի մը մէջ : Մէկը՝ ադամանդին յոյսորտանքը եւ միւսը՝ գինովին պարծանքը ծաղրելու սքանչելի շարժառիթներն են :

ԳԱՄԻՅԼ

ՋԻԹԵՆԵԱՑ ԼԵՐԱՆ ՎՐԱՑ



Արշալոյս էր՝ արծաթաձալ քեւերով,
Վերջալուսինն շիջանուտ էր փայլն լեռին,
Մինչ Մովսրեան լեռներն երկներժի քողերով՝
Նոր հարսերու պէս պատկառոտ ու լըռին՝

Կը սպասէին ոսկեգիտակ Արեւին՝
Որ շող կարէ վերելքն ի վեր լեռներուն
Եւ նըշանակ խաղաղութեան Ձիթենին
Փայլինազարդ փրքքի ժպտուն, սաղարբուն:

Ճիշդ մէջն պահուն՝ սարերն ի վար Սաղեմին
Սրտանշտիկ կ'իջնէր խմբակն արեղեան
Ու Գերսեման գարնանազեղ՝ խնդազին
Բերէր ողջոյն Գերեզմանէն Տիրունեան:

Արև ցարեր ոսկերեզան քեւերով,
Ոսկի շողեր կանաչներուն էր սրսկեր.
Ու Ձիթենեաց լեռն Յիսուսի լոյսերով
Նորէն, կարծես, նոր փառքերով նորոգուէր:

Հոն, լեռն ի վեր, դեպ յարեւել՝ հե ի հե,
Արեղաներն հոն քայլ կ'առնէն քրտնալից,
Հոն սաղմոսկունք, հոն ալեւուք քն ի քն
Սլանան, բռնալին շուրջն Աստուծոյ Գանդից:

Տրխուր Մեծ-Պահքն Հայրսուրբներուն սևազգած
Սև ալքերուն տակ ծածկւում սրքմին՝
Տօն, Տաղաւար կնդրուկներով հոտոտում՝
Մոռնալ կու տան խեղճ Կիրակին ՏՆՏԵՍԻՆ:

Ու հրապուրիչ գեղղեղներով «Հրաշափառ»,
Եպիսկոպոս ոսկեճամուկ զարդարում,
Շողակնայեռ, խաչ, գաւազան, զոյգ բուրմառ,
Հանդէս կազմեն խունկով, մոմով փառապանծ:

Ուխտաւորին սիրուն է համակ խանդավառ,
Աչքերը լի սուրբ, ջերմեռանդ արցունքով,
Կարծես Յիսուս կը նշմարեն բոցավառ՝
Որ համբառնայ բոսորափառ քեւերով:

Սուրբ լեռան վրայ վըրան կանգնած Տաճարիկ՝
Պատարագի հոն բարձրանան մրմունջներ
Ու Համբարձման Տօնը կանխած Սուրբ Զատիկ՝
Ուխտաւորին կը բորբոքեն եռանդներ:

— Տաքուկ արեւն երկնից կեղրոն բարձրացած՝
Մարդու ճակտէն կը բախէ տաք քրտինքներ
Եւ Արեղեանն օրհներգներով առլցում
Վանք կը դառնայ զարձեպ Մեծ-Պահքն ողջունել:

ԴԵՊԻ ՀՆԴԱՍՏԱՆ

ԹԱՂՈՒՄ ՔԱՂԱՔԸ

2.

Արդ, օրը կը ծագի ու կը լսեմ ստորեւս, անտառին մէջ, թռչուններու զարթնումը: Այս մեհեանի աշտարակին վրայ, մայրաքաղաքէն եւ դալարիքի մէջ եմ, իրեւ եղէգնուտ դաշտի մէջ. Զղջիկներ՝ զօրչափոյն թեւերով աւերակներու կենդանիներ՝ սրոնց հանգիստը խռովեցի, կը դառնային առաւօտեան լոյսին մէջ, ու խիստ փոքր սկիւռներ ցատկոտուն, հրաշալի կերպով արագաշարժ եւ շնորհալի, կը հսկեն վրաս տեւեւներուն միջեւէն:

Ուրքերուս տակ մէկ քանի հատ այն ծառերէն, որոնք կործանած քաղքին պատանքը կը կազմեն, զարդարուած են գարնանային տօնի օրուան մի պէս, կարմիր, դեղին, վարդագոյն ծաղիկներով: Ու տեղատարափ մը կ'անցնի կ'երթայ, արագ, այն գեղեցիկ ծաղկազարդ գազաթներուն վրայ. յետոյ կ'երթայ, կը կորսուի, կը լուծուի, կ'ըլլայ մշուշ, վայրենի հեռաւորութիւններուն խորը:

Բայց արեւը, որ ամպերուն եւ անձրեւին ետեւէն արագ վեր կ'ելլէ, արդէն իսկ չափէ դուրս կը տաքցնէ գլուխս. ժամ է երթալ անտառին մէջ մտնել, չուքին տակ, կանանչ գիշերուան մէջ ուր կ'ապրին հոստեղի մարդիկը, ու սուրբ աշտարակէն վար կ'իջնեմ ստերու սանդուխէ մը:

* * *

Վարը, բեկորներու եւ աւերակներու շրթ աշխարհն է, կարմիր հողին մէջ, այլանդակ արմատներուն մէջտեղ, որ կը գալարին օձերու պէս: Հարիւրներով փռուած են գետինը ջաթախուած աստուածութիւնները, կրանիթէ փղերը, մեհեաններու բազինները, հրէշները, խորհրդաւոր նշաններով վիշապով եղած զարհուրելի արարքին, որ Մուրջ երկու հազար տարի է կատարուեցաւ Մարպարներէն:

Անքալտելի ճակոյաններուն շուրջը, մեր օրերուն պուտապականները ջերմեւանդութեամբ հաւաքած են այս իրերուն յարգիւնները. կործանած մեհեաններուն սանդուխներուն վրայ՝ չարած են նախնի աստուածներու խորատկուած գլուխներ, եւ իրենց խը նախքով, կանգուն մնացած մեհեաններու բազինները, եղծուած եւ անկարպարան հիւսիս, ամէն առաւօտ ընտիր ծաղիկներով կը լեցուին, ու փոքր լամպարներ կը վառին հոն

տակաւին: Անուրադարուան կը մնայ իրենց աչքին նուիրական քաղաքը, եւ շատ հեռուներէն, իրենց երկրային մարմնացումէն խառնած ուխտաւորներ կուգան հոն մտամոլորութիւն աղօթել, ծառերու անդորրութեանը մէջ:

Մեծ սրբարաններու յատակածէր ի յայտ կու գայ մարմարիոններու, սալաքարերու, սիւներու շարքով որոնք կը սկսին աշտարակներէն, անտառին ծառերուն տակ կորսուելու համար. պիտի հասնէինք է՛ն սուրբ տեղը մտայնելով պատճառող անդաստակներէ զոր կը պահպանէին ստորին աստուածները եւ հրէշները, բոլոր այն քարաշէն ժողովուրդը, այսօր գետին փռուած եւ փոշիացած:

Այս մեհեաններէն աւելի, որ հեռուէն կը տիրեն թանձրախիտ եղէգնուտին, ուրիշ հարեւաւորներ կան, ամէն կողմէ կործանած, ու նաեւ անհամար մեծ շէնքերու հետքեր. անտառը իր մէջ կը պահէ այնքան կրանիթէ սիւներ որքան ծառերու կոճղեր, ու ամէն ինչ կը շփոթուի, անյողգողգ տեւեւներու կամարին տակ:

Մեր թուականին սկիզբները, իշխանուհի Սանկամիթան, որ մեծ միստիքական մը եղաւ, հիւսիսային Հնդկաստանէն բերած էր, հոս անկելու համար, ոստ մը այն ծառէն ուրուն տակ Պուտտան կու գար ստանալ Գիւտութիւնը, — ու ոստը կը կենայ տակաւին. յաղթ եւ բազմաճղի ծառ մը եղած է, որուն ամէն ճիւղերը արմատ ձգեցին, թզենիներու կերպով. չըջապատուած է՝ ան հնօրեայ բազիններով, կրօնաւորի փոքր լապտերներով որոնք անդադրում կը վառին կանանչ մթնշաղին եւ սփռուած հոտաւէտ ծաղիկներու մէջ, որոնք կը նորոգուին ամէն օր:

Ամէնէն տարօրինակը, այս անտառին մէջ, այնքան սեմեր գտնուիլն է, ճերմակ մարմարիոնէ փառաւոր սեմեր նրբառաջ քանդակաղործումներով ծածկուած. այնքան վերնադաւիթներ զոր կը պահպանեն աստուածութիւններ, ընդունելութեան խորհրդաւոր ժպիտով. — բայց որ՝ տեղ մը չեն առաջնորդեր. բնակարանները, որ փայտաշէն էին, իրենց սանդուխները եւ իրենց սալաքարերը միայն թողած են իրեւ հետք, դարերու միջեւէն. ուստի, այս փառաւոր մուտքերը կ'երթան կը յանգին արմատներու, խոտերու եւ հողի միայն:

Քանի մը տարիէ ի վեր, կայ նաեւ, Ա.


նուրադարձութեան մէկ անկիւնը , բնակութեան հաստատուած գիւղ մը , բայց հովասուն գիւղ մը որ չի վրդովեր բնաւ վայրին մեղամաղձութիւնը , որովհետեւ ան ալ կը պահուի ծառերուն տակ , ինչպէս աւերակները : Հնգիկները , որոնք եկած են բնակիլ թաղուած Բաղաքին մէջ , իրենց տեղէն հանած չեն մեծ ծառերը , բայց միայն ազատած են զանոնք լիաններէ եւ տատասկներէ , այսպէս երեւան հանելով փափկասէզ մարգեր , ուր իրենց զէպրանները , այծերը կը ճարակին շուքին մէջ , իրրեւ երջանիկ կենդանիներ նուիրական անտառի հողի մը վրայ : Իրենք , Հնգիկները , որոնց կեանքը կը սահի սուրբ աւերակներու մէջտեղ եւ որոնք կը լողանան աւազաններուն մէջ , կը խորհին թէ իրիկունը թափառող ուրուականներ կան , եւ անոնք խոյս կու տան յաղթ ճակոպաներու շուքին տակ կենալէ , լուսնի գիշերներ :

Սակայն հոս է մտամոխիւման եւ աղօթքի ստուերոտ ապաստանարանը : Եկեղեցիի անդորրութիւն մը կը տիրէ արահետներուն մէջ , խոտէ փափուկ գորգերուն վրայ , ուր ծաղիկներ՝ լայն լեռնավարդերու հանգոյն՝ կ'իյնան անձրեւանման , ծառերուն բարձրէն :

Ու ի՛նչքան սրտառու չեն , երկու հազար տարիներէ ի վեր խորտակուած արձաններուն առջեւ , այն փոքր լամպարները յարատեւ վառուած անտառին տակ , եւ այն մշտաթարմ ծաղիկները՝ դրուած դարաւոր քարերու վրայ :

Հնգկաստանի մէջ աստուածներուն բնաւ չեն տանիր ծագիւթուել , բայց հիանալի կերպով կը սփռեն զանոնք իրենց բագիւններուն համար . լիարուռն յասմիկ կը ցրցնեն — միմիայն թերթիկները՝ ցօղունէն փրցուած , — ու կարտէնիաներ , եւ խոշոր ծաղիկներ բրարիոնի հոտով , հոտաւէտ սիւռսցներ՝ ձեւազնեւով , որոնց ճերմակութեանը վրայ կը ցանեն ապա Պենկալեան վարդեր Ու այս ամէնը կայ հոս , կործանած մեղմունքի ընդմիջումով , որովհետեւ յարաբերուած վրայ , որոնք յամարած կ'ընկղմին հողին մէջ :

Թարգմ. ԵԻՓԻՄԷՆ ՕՏԵԱՆ



ՏՊԱԳԻՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

Մասիսի նախորդ թիւը մամուլին յանձնուած էր արդէն , երբ հրատարակուեցաւ օրաթերթերու պաշտօնական բաժնին մէջ՝ թէ վեհ. Սուլթանը բարեհաճած է Ա. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել՝ Տպագրական Տեսչութեան Դեր-Տնօրէն Վսեմ. Հըֆզի պէյի , կը շնորհաւորենք Վսեմ. Հըֆզի պէյը՝ կայսերական այս բարձր գնահատման արժանացած ըլլալուն համար :

Ռուսմանախոյց հոգեւոր հովուութեան հարցը նորէն կը յուզուի օրաթերթերու մէջ : Պուքրէյէն Բիւզանդիոնի ուղղուած նամակ մը կ'առաջարկէ որ հարկ եղած օրինական ձեռնարկները կանխաւ կատարուելով ուսման կառավարութեան մօտ , Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գէորգեայի Կաթողիկոս Իւթիւճեան հրաւիրուի երթալ այցելել Ռուսմանիոյ հայ գաղթականութիւնը , — պաշտօն՝ որ անցած տարի՝ ցաւալի թիւրիմացութեամբ մը ընդհատուեցաւ , Իւթիւճեան Սրբազան հարկադրուելով ետ դառնալ Ֆոքլանէն : Սուրհանդակի մէջ երեւցած թղթակցութիւն մին ալ , նոյն պէտքը զգացնելով եւ առաջարկելով որ Պատրիարքարանը ուղղակի իր իրաւասութեան ներքեւ առնէ Ռուսմանահայոց հովուութիւնը , ինչպէս կը փափագի Ս. Հայրապետը եւ ինչպէս կը փափագին եղեր Ռուսմանահայերը իրենք ալ , յարուցուած դժուարութիւններու քօղին մէկ կողմը վեր կ'առնէ , գրելով . «Ընտրուելու կան որ , Պուքրէյի Թաղ. Սրահուրդի գանձապետը որ 18 տարիներէ ի վեր այդ պաշտօնին մէջն է , հակառակ բարձուած բողոքներուն , եւ որուն անձնական չահերը չեն ներեր վերադառնալ պաշտօնէի մը սոյն գործերուն միջամուխ ըլլալը , շատ համամիտ չէ հոգեւոր հովուի մը գալուն » :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Հ. Կ. (Մամսոն) , — Ձեր եւ Մասիսի ուրիշ թերթերցոյններու կողմէ յայտնուած փափագներու գոհացումը պիտի գտնէք , կարգաւորով « Այնտառակիցներու շուրջը » խմբագրական գեղարարութեամբ :

Արեւմտահայ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. Մ Ա Տ Ո Ւ Փ Ս Ե Ա Ն
Թիւ 27, Ֆինանսըլար Եօզուշու, Կ. Պոլիս

ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ

ԲԻԻԶԱՆԴԻՈՆ , Թ. 1048—1053 :

Տէր եւ Տնօրէն Բ. Քէճեմէն :

Միջազգային կացութիւնը . Ինչ կ'անցնի
կր դասնայ (Բիւզանդ Բիւզանս) : — Բանասի
րական . Հայոց կրօնական բանաստեղծութիւնը
(Ի. Խաչկունց) : — Հին Մաղաքա—կեսարիա
գտնուած (Նոյն) : — Ուսուցիչներուն վիճակը
եւ օրուան հանգանակութիւնները (Զ. Մաղաք.
եան : — Հայ վանորայք (Տրդատ եպիսկ Պաշ
եան) — Ուսմանահայ Բրտնիկ (Թղթակցութիւն
Պոլսի) : — Հեղինակութիւն թէ բանագո-
չութիւն (Տր. Թ. Սալաւանեան) : — Միացեալ
Նահանգաց գաղթային կառավարութիւնը (Հ.
Ս. Ճեղքալեան) : — Տ. Գէորգ եպիսկ Ի. թիւ ճեան
(Նաւակ Պոլսի) : — Նշանաւոր գէ. քեր . Սէ-
սիլ Բոսո (Թարգմ.) : — Մեծ Պաշ Գալստեան
(Գիւսակ) : — Միջազգային կացութիւնը . Ինչ
հանելուկ է այս (Բիւզանդ Բիւզանս) : — Մեծ
քիսեղէկ Սրբազանին խօսքերը (Գ. Ն. Շիշ
մանեան) : — Պատմութիւն քաղաքակրթու-
թեան (Թարգմ. Կ. Պօսիկեան) :

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ , Թ. 325—330 :

Տէր եւ Տնօրէն Տ. Ճիւլէլեկեմէն :

Արտաքին քաղաքականութիւնը . Ֆրան-
սա . Գերմանիա . Անգլիա Ռուսիա (Լիւնիս) : —
Մալիարայի կեանքէն (Թղթակց) : — Չանգակին
լեզուն (Տ. Ս. Շաշեան) : — Գաւառի կեան
քէն (Թղթակցութիւն Վանի) : — Ուսողութեան
տաղանդը (Ա. Ս.) : — Մենք ենք յանգաւորը
(Ա.) : — Խճագրական . Գոյն . Գարնան խո-
հեր (Զարմայ) : — Չայնագրեալ Շարական
մը (Մ. Թիւրեմեան) : — Խառնութեանքը (Մ.
Բօշ) : — Բարեգեան Բրտնիկ . Միջինքը (Տ.) :
— Մեր երիտասարդներուն . (Աշոտ Բիւրապ
ճեան) : — Պաշտօնային հայերը (Բարբառի-
մեոս Ծ. Վ. Պաղճեան) :

ԱՐԵԻԵԼԻ, Թ. 4278—4283 :

Տէր եւ Տնօրէն Զ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ :

Այժմէութիւններու շարքը (Արեւ Ապրեւ-
եանց) : — Ուրիշայի գործեր (Գ. Կ. Ս.) : — Նա-
մակ Պարսկաստանից . Վերջին փոխառութեան
առթիւ (**) : — Ճամբու յօթեր . Հալէպի մէջ (Մու-
շեղ վարդապետ) : — Գաւառային սուրհանդակ-
ութեան գործեր (Մ. Փ.) : — Վերջին ճամ-
բորութիւնս (Գալուստ Անդրեանեան) : —
Անգլիա եւ Ֆրանսական մամուլը (Զարեհ Եռ-
սուկեան) : — Անգլիա եւ Պեմբրայի մամուլը
(Նոյն) : — Պաշտեան արձագանգ (Բ. Զ.) : —
Վերջական բանաստեղծ մը («Արեւելք») Եան-
սիկն . — Տնտեսական նշաններ . Ուրիշայէն
(Գ. Կ. Ս.) : — Իրենք պէտք է ստանեն (Յու-
սակ) : — Կովկասեան թղթակցութիւն Դուրա-
րոնները (Արեւ Ապրեւեանց) : — Հետեանք-
ներ . Նամակ Մանչեսթրէ (Շ. Շաւարշ) : —
Սինամուտի արկածին շարքը (Ծովակ) : — Շա-
րաթական յօթեր (Արեւ) :

ԾԱՂԻԿ , Թ. 121—126 :


Տէր եւ Տնօրէն Ա. եւ Ռ. ՍԱԳՆԱՆ :

Պօլսիներուն ընդգրկմութիւնը : — Միլիտա-
տէրներու կեանքէն : — Զրկուածները . Նորա-
վէպ . (Խ. Բ.) : — Ուսուցիչ եւ թաղականի կոչու-
մ . Բարեգալտները . Բարքեր ու Նկարներ (Ե.
Գօշանճեան) : — Գաւառական դպրոցներու
շարքը (Կ. Ն.) : — Ընկերային խնդիր մը : —
Կրկնութիւն եւ տղոց աշխատութիւնն ի Ֆրանսա
— Օրը օրին . Պօլսական պատերազմէն . (Ա.
Բ.) : — Եօթնեակը (Խմբագրական) : — Ման-
կան խնամք : — Անձանօթ եւ հոգեկան խըն-
դիրները (Ա. Ն.) : — Դէպի խաղաղութիւն . —
Օրը օրին . Պատուոյ խնդիր մը :

ԿՈՒԶՈՒԻ ԳՐԱՎԱԾԱՌԱՆՈՅԻ ԵՐԱՐԱՐ ԸՆԴՄԸ ՊԱՂՃԷ ԳԱՐՈՒԻ ՃԱՄԲՈՆ ՎՐԱՅ , ՎԱՐ-
ՃԱԿԱՐՈՒԹԵԱՆ ԱՅՈՅՄԱՆՆԵՐՈՆ ՀԱՄԱՐ , ԴԻՄԵԼ ՊԱԼԵՆՅ ԳՐԱՌԱՆ : 1—2

ՏՈՒՐԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց , ստամոքսի , աղ-
եաց հիւանդութիւններու , ծննդամիզական եւ գաղղիական ախտերու : Բերա , Թագսիմ փո-
ղոց , թիւ 10 , ամէն օր կէս օրէ վերջը :

ՏՈՒՐԹ. Յ. ՈՍԿԵԱՆ, Կ. Պոլիս վերադարձած ըլլալով , հաստատուած է Բերա , Պէ-
քեար փողոց թիւ 1 տունը , ուր ամէն օր՝ ներքին եւ արտաքին ամէն տեսակ հիւանդու-
թիւններ կը դարմանէ : Հինգշաբթի , կէս օրէն ետքը , աղքատներուն ձրի :



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ
 Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ
ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ
ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ
ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ
ԹԵԹԵԻՈՒԹԵԱՄԲ
ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ



Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ
ՅՈՎՀԱՆՆԵՍ Կ. ՄԻԱՆՆԱՆ
 Կեդրոնաւանդին, Սիրբէի, Քէօրրիւի խան, Թիւ 3
 Մամուկիւ, Ղալաթա, Պէոյիւք Միլլէթ խան, Թիւ 33
 Գնողներու համար վճարման եւ ամեն տեսակի դիւրութիւններ

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
 Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԻՆԶԻ ՃԻԻՂԻՆ
 97 Միլիոն
 ԵՐԱՇԵԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻԻՂԻՆ
 137 Միլիոն
 Ընկերութեան գրաստանն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆԲԱՆ
 Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն
 Սիւնն Էֆ. Քալսէրլեան
 Կենաց ճիւղին տեսուչ
 Միհրան Էֆ. Տէր Ներսիսեան
 Կ. Պոլիս, Կալաթա, Թաշմապուրուն խան
 Օսմ. Պանքայի դէմ

Յ. ՄԱՏԹԻՍԵԱՆ ԹՂԱՎԱՃԱՆԱՆՈՐ
1,000,000 ՆԱՄԱԿԻ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ
Պանակել օրինակներու հաւաքածոն ՁՐԻ
 Գատառներէ 40 փարալի բոլորում դրկել փարալի ծախսոց հաշւար
Յ. ՄԱՏԹԻՍԵԱՆ ԳԻՆՆԱԿԱՆ Կ. ՊԱՆԻՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ” Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԱՆԸ, 608 կրկնասիւնակ էջերէ
 բաղկացած, ճոխ բովանդակութեամբ, իր ամբողջական հատոր մը թղթակազմ, հրապարակ եղած է եւ կը ծախուի ամէն գրաւաճառի քով, Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԻՍԵԱՆ Տպարան, Գինն է 40 դր., Գաւառներէ ուղղորդող պէտք է 5 դր. աւելի վճարեն իրր թղթատարի ծախք: